

---

ՎԻՎՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայ բարբառագիտության հարցեր, *Երևան, «Հայաստան» հրատ., 2014, 232 էջ:*

Հայ բարբառագիտության մեջ կարևոր ներդրում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական բ. գ. թ., դոցենտ Վ.



Կատվայանի «Հայ բարբառագիտության հարցեր» ուսումնասիրությունը: Հոդվածների տեսքով գրքում զետեղված հետազոտությունները վերաբերում են հայ բարբառներին բնորոշ լեզվական տարբեր իրողությունների: Դրանք հրապարակվել են զանազան պարբերականներում և գիտաժողովներում: Մեկ գրքով ներկայացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել նրանով, որ դրանք, ինչպես գրում է հեղինակը, «ամբողջություն են կազմում թե՛ հեղինակի բարբառագիտական ըմբռնումներն ամփոփելու և թե՛ քննվող հարցերի փոխկապակցվածության առումով» (էջ 3):

Հոդվածներում քննվում են թե՛ արդիական հնչեղություն ունեցող տեսական խնդիրներ, թե՛ առանձին բարբառների կամ բարբառախմբերի վերաբերող դիտարկումներ, որոնք, սակայն, կարևոր նշանակություն ունեն ոչ միայն «բարբառային հայերենի, այլև ընդհանրապես հայերենի ուսումնասիրության համար»:

Գրախոսվող գիրքը կազմված է երեք մասից: Առաջին երկուսն ամփոփում են հոդվածները, իսկ երրորդ մասը ուսումնասիրություն է մեսրոպյան Ե, Ե գրերի հնչյունական արժեքի և ուղղագրական յուրահատկությունների մասին:

Անդրադառնանք այն հարցադրումներին, որոնք Վ. Կատվայանի ուսումնասիրություններում փաստարկված, ուստի միանգամայն ընդունելի այլ լուծումներ են ստացել՝ ի տարբերություն ավանդական բարբառագիտության:

1. Անդրադառնալով հայ բարբառների ուսումնասիրության ոլորտում առաջացած խնդիրներին՝ Վ. Կատվայանն առաջադրում է, նախ, ճիշտ մոտեցում ցուցաբերել բարբառ-գրական լեզու փոխհարաբերություններին, որոնց գնահատումը սկզբունքային նշանակություն կարող է ունենալ: Ակնհայտ է, որ պետականության առկայության պայմաններում գրական լեզուն դառնում

է համագործածական, իսկ մարդկային գործունեության որոշակի ոլորտներում՝ պարտադիր: Այսպիսի պայմաններում մեծանում է բարբառների վրա գրական լեզվի ազդեցությունը, որն էլ նկատի ունենալով՝ ոմանք առաջ են քաշում բարբառների աստիճանաբար վերանալու տեսակետը: Միանգամայն սխալ մտայնություն թեկուզն այն պարզ պատճառով, որ այդ դեպքում գրական լեզուն գրկվելու է իր գոյության հիմքից, իրեն սնող աղբյուրներից: Լեզուների պատմությունը ներկայացնում է ճիշտ հակառակ պատկերը: Եվ, ի վերջո, հայտնի ճշմարտություն է, որ գրական լեզուները ձևավորվում են բարբառների (բարբառախմբերի) հիմքի վրա և ոչ թե հակառակը: Բնչպես գրական լեզուն, այնպես էլ բարբառը պատմական իրողություն է, ուստի ժամանակի ընթացքում կարող է կրել լեզվական տարբեր կարգի փոփոխություններ՝ ձեռք բերելով լեզվական նոր երանգներ: Այստեղից էլ հետևում է, որ «բարբառները լեզվի բնական վիճակն են ներկայացնում, և հայերենի մասին լիարժեք պատկերացում անհնար է կազմել՝ առանց բարբառների համակողմանի ուսումնասիրության» (էջ 5):

Ներկայացնելով բարբառների դասակարգումները՝ Վ. Կատվայանը ցույց է տալիս նաև դրանց սահմանափակություններն ու թերությունները:

2. Լեզվաբանը նոր մոտեցում է ցուցաբերում բարբառի սահմանման նկատմամբ: Խոսելով բարբառի ավանդական սահմանման մասին՝ նա կարծիք է հայտնում, որ այն չի բացահայտում երևույթի բուն էությունը: Մասնավորապես, քննելով Էդ. Աղայանի տեսակետը բարբառների վերաբերյալ՝ հեղինակը կարծում է, որ վաստակաշատ գիտնականի դատողություններում հակասություններ կան ընդհանուր լեզու-գրական լեզու-բարբառ հարաբերություններում (էջ 15), որոնք խանգարում են ճիշտ պատկերացում կազմելու բարբառների առաջացման ու դրանց պատմական զարգացման գործընթացի մասին:

Վ. Կատվայանը ճիշտ չի համարում նաև այն մոտեցումը, որ գրական լեզվին գերակայության իրավունք վերապահելով՝ գուցեև ակամա հասարակության ներսում բացասական վերաբերմունք են ձևավորում բարբառների նկատմամբ: Պարզապես պետք է երևույթն ընդունել ու ներկայացնել այնպես, ինչպես այն գոյություն ունի. բարբառը լեզվի բնական, կենդանի, ուստիև չնորմավորված գոյավիճակն է, որն աչքի է ընկնում ձևերի բազմազանությամբ, անկանոնություններով և տարածքից տարածք հանդես է բերում տարբերություններ: Ըստ հեղինակի՝ հենց այդ հատկանիշներն էլ պետք է ընկնեն բարբառի սահմանման հիմքում: Դա թույլ կտա բարբառների առաջացումը պայմանավորել լեզվի բնական վիճակով և ոչ թե հասարակական քաղաքական, աշխարհագրական և արտալեզվական այլ գործոններով: Վերջիններս

կարող են լավագույն դեպքում միայն բարբառային տարբերությունների գոյացման պատճառ դառնալ:

3. Խոսելով լեզուների ունեցած ընդհանրությունների մասին՝ Վ. Կատվայանը նշում է, որ հայ լեզվաբանության մեջ առավելապես ուշադրություն է դարձվել հայերենի տարբերակային դրսևորումների լեզվական տարբերությունների վրա, որոնք ներկայացվում են կա՛մ գրաբարի, կա՛մ արդի գրական հայերենի համեմատությամբ: Մինչդեռ բարբառային հատկանիշների համեմատություններ անելու համար անհրաժեշտ է կատարել համեմատության եզրի ճիշտ ընտրություն: Այս առումով գնահատելով Գ. Ջահուկյանի արտահայտած տեսակետը՝ նա կարծում է, որ վաստակաշատ գիտնականի առաջարկած «իդեալական» եզրը գրական լեզուն է՝ առանց բարբառային հատկանիշների: Այս դեպքում ևս Վ. Կատվայանն առաջարկում է այլ մոտեցում. պետք է առանձնացնել ընդհանուր հայերենյան լեզվական հատկանիշները, որոնք, կազմելով մի ամբողջական համակարգ, կապահովեն համեմատությունների միասնական ու ճշգրիտ եզր:

4. Մեկ այլ ուսումնասիրությամբ անդրադառնալով լեզվում հանդես եկող տարբերակայնության խնդիրներին՝ լեզվաբանը նշում է, որ տվյալ լեզվում եղած տարբերակային միավորների ու հատկանիշների ոչ գիտակցական, պայմանականորեն ձևավորված յուրօրինակ համատեղումն առաջ է բերում համակարգի մասնավոր ու ինքնատիպ դրսևորում, որն էլ հենց բարբառն է (էջ 30):

Վ. Կատվայանն իրավացիորեն այստեղ ևս ոչ ճիշտ մոտեցում է նկատում: Բանն այն է, որ մինչ օրս ուշադրություն է դարձվել տարբերակայնություն առաջ բերող արտալեզվական գործոններին, մինչդեռ բարբառի առաջացման հիմնական ու գլխավոր նախապայմանը լեզվի էությունից բխող տարբերակայնությունն է, որը դրսևորվում է լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակներում: Իր այս տեսակետը հեղինակը ներկայացնում է կոնկրետ բարբառային նյութի միջոցով:

5. Գրքի 2-րդ մասում ամփոփված ուսումնասիրությունները վերաբերում են Բայազետի բարբառի հնչյունաբանական, ձևաբանական իրողություններին՝ հրնթացս բացահայտելով էական թերություններ հրապարակի վրա առկա ուսումնասիրություններում, միաժամանակ ի հայտ է բերում մինչ օրս չնկատված իրական իրողություններ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հայտնի «Աճառյանի օրենքին»: Վ. Կատվայանը նկատում է, որ թեև այն ընդունվել է բարբառագետների կողմից, սակայն հենց վերջիններիս դիտարկմամբ՝ որոշ իրողություններ «շեղվում են» այդ օրենքից, ուստի օրենքն ամբողջական ու համոզիչ բացատրություն չի ստանում, ինչքան էլ նոր սահմանում-

ներ, լրացումներ ու ճշգրտումներ են ներկայացվում: Չայնավորների քննադատական երևույթը Վ. Կատվայանը դիտարկում է Բայազետի բարբառի ձայնավորների առնչությամբ նոր մոտեցմամբ կատարված ուսումնասիրության հենքի վրա՝ հանգամանորեն քննելով ու սահմանազատելով քննադատական դրսևորման և դրա բացակայության դիրքերը: Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս վերաձևակերպելու «Աճառյանի օրենքը», որն այլևս զերծ կլինի թերություններից:

6. Հայ բարբառագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել հիս համապատասխանության հարցը: Ոմանց կարծիքով՝ դա կապված է հնչունափոխության հետ, ոմանք էլ համարել են ենթաշերտային երևույթ, ուրարտական ազդեցության հետևանք: Առաջարկվել են այդ համապատասխանության երևան գալու տարբեր ժամանակահատվածներ: Ուսումնասիրության վերջում Վ. Կատվայանը հանգում է հետևյալ եզրակացությունների, հի դիմաց խի առկայությունը հնչունափոխության հետևանք չէ: Հենց այդ հատկանիշը բարբառները ժառանգել են հնագույն շրջանի բարբառային վիճակից, որը հ չի ունեցել: Ավելի ուշ խախտս բարբառներում հն առաջացել է շնչի հավելումով և յ>հ հնչունափոխության հետևանքով, ընդ որում՝ երկրորդ դեպքում հն երբեք իս չի դառնում:

Գրքի երրորդ մասը կազմում է «Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչունական արժեքը» ուշագրավ ուսումնասիրությունը: Հայ լեզվաբանական միտքը, իհարկե, անդրադարձել է այդ գրերի հնչունական արժեքին և ուղղագրական առանձնահատկություններին, սակայն Վ. Կատվայանի ուսումնասիրությունը մյուսներից առանձնանում է նրանով, որ հարցը քննվում է բարբառային նյութի հիման վրա՝ ցույց տալով, որ նման և բազմաթիվ այլ հարցեր կարելի է մեկնաբանել հենց բարբառների օգնությամբ: Այսպիսի մոտեցմամբ էլ հեղինակը, կարծում ենք, լիարժեք լուծում է տվել մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությանը և հնչունական արժեքին վերաբերող հարցերին:

Գրքում զետեղված ուսումնասիրությունների կարևոր արժանիքն այն է, որ եզրահանգումները կատարվում են լեզվական համապատասխան նյութի քննությամբ և ուղղակի հայտարարություններ չեն:

Այսպիսով, կարելի է անվերապահորեն փաստել, որ գրքում արտահայտված մոտեցումները բարբառների ուսումնասիրության ոլորտում նոր հորիզոններ են բացում հայ բարբառագիտության հետագա զարգացման համար:

Թ.Ա.ԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ